ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 3-ԻՆ ԳՈՒՄԱՐՎԱԾ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ԱՎԱՐՏԻՑ ԱՆՄԻՋԱՊԵՍ ՀԵՏՈ՝ ՆԱԽԱՁԵՌՆՈՂԻ ՍԱՀՄԱՆԱԾ ՕՐԱԿԱՐԳՈՎ, ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով 2021 թվականի հունիսի 3-ին գումարված արտահերթ նիստի ավարտից անմիջապես հետո Ազգային ժողովի արտահերթ նիստ գումարելու վերաբերյալ Ազգային ժողովի պատգամավորների նախաձեռնությունը, ինչպես նաև Ազգային ժողովի «Իմ քայլը» խմբակցության «2021 թվականի հունիսի 3-ին գումարվող արտահերթ նիստի ավարտից անմիջապես հետո՝ նախաձեռնողների սահմանած օրակարգով, Ազգային ժողովի արտահերթ նիստ գումարելու վերաբերյալ Ազգային ժողովի խորհրդին միջնորդություն ներկայացնելու մասին» որոշումը, առաջնորդվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասով և 7-րդ մասի 2-րդ կետով՝ Ազգային ժողովի խորհուրդը որոշում է.

Համաձայնություն տալ 2021 թվականի հունիսի 3-ին գումարված արտահերթ նիստի ավարտից անմիջապես հետո՝ նախաձեռնողի սահմանած օրակարգով, Ազգային ժողովի արտահերթ նիստ գումարելուն:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ՄԻՐԶՈՅԱՆ**

2021 թվական, հունիսի 3
Երևան
ԱԺԽՈ-039-Լ